ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
«ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Սևան, Նաիրյան 169
Հեռ. 060-75-69-61
Էլ. փոստ sevan.hospital@mail.ru
N- c/1-1134
«_24_» _06_ 2024թ.

ՀՐԱՄԱՆ

«Սևանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» միջև 04.03.2024թ կնքված «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 24/01» ծածկագրով «Սևանի Բժշկական Կենտրոն » ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և«Սևանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» միջև 04.03.2024թ կնքված «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 24/01» ծածկագրով «Սևանի Բժշկական Կենտրոն » ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագիրի 2.1.7 կետի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:Պայմանագրի 2.1.7.1 կետի <<բ>> ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Հրամայում եմ՝

1. Պայմանագիրը լուծել միակողմանի 1 և 44 չափաբաժինների մասով:

2.Տվյալ մասնակցի նկատմամբ գնումների ընթացակարգերին հետագա մասնակցության իրավուն չունենալու գործընթաց սկսել:

<< Սևանի ԲԿ >> ՓԲԸ

Տնօրեն՝ Ա.Նիկողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
,ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Սևան, Նաիրյան 169
Հեռ. 060-75-69-61
էլ. փոստ sevan.hospital@mail.ru
N-1135
,_24 ___06__ 2024թ.

ԱԳԱՍՏ ՍՊԸ տնօրեն
Գ. Մուրադյանին

ՇԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

<<Սևանի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Ագաստ>> միջև 22.01.2024թ կնքված <<ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 24/01>> ծածկագրով <<Սևանի Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագրի (այսուհետ պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ պայմանագիր) սահմանված կարգով , ծավալներով , ժամկետներում և հասցեով Գնորդին մատակակարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցով նախատեսված՝ Կլոպիդոգրել 75 մգ դեղահատեր, ացետիլսալիցիլաթթու , մագնեզիումի հիդրոքսիդ 75 մգ/15,2 մգ դեղահատեր (այսուհետ՝ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սակայն մի շարք զգուշացումներից հետո Վաճառողը մինչ օրս ապրանքը չի մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:Պայմանագրի 2.1.7.1 կետի <<բ>> ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ <<Սևանի Բժշկական կենտրոն >> ՓԲԸ-ն մասնակի լուծում է <<Ագաստ >> ՍՊԸ-ի միջև 22.01.2024թվականին կնքված <<ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 24/01>> պայմանագիրը 1 և 44 չափաբաժինների մասով :

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից :

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից կվճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները, ապա <<Ագաստ >> ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

<< Սևանի ԲԿ >> ՓԲԸ

Տնօրեն՝ Ա.Նիկողոսյան